

ԼԵՁՈՒՄԳԻՏԱԿԱՆ

ՀՆԴԵՐՈՊԱԿԱՆ ՆԱԽԱՇՐՋԱՆ(*)

Պատմել մի որևէ լեզուի պատմութիւնը՝ նշանակում է նկարագրել այն բոլոր կերպարանափոխութիւնները, որոնց ենթարկուել է այդ լեզուն իր գոյութեան ընթացքում, սկսած իր նախնական շրջանից: Այդ կերպարանափոխութեանց ամենամեծ մասը յառաջացած է լինում ներքին, այսինքն բնական ճանապարհով, իրեւարդիւնք բարեշրջութեան և բնական զարգացման, մի ուրիշ ստուար մաս յառաջացած է լինում արտաքին ճանապարհով, այսինքն փոխառութեամբ, իրեւարդիւնք օտար ազդեցութեանց, և վերջապէս երրորդ աւելի փոքր մասը յառաջացած է լինում անհատական ճանապարհով, այսինքն

(*) Վերցուած՝ մեծամուն հեղինակի «Պատմութիւն Հայ Լեզուի» գործէն (Ա. Գլուխ):

տարուած հանդիսութիւններուն: Զանազան ֆէրմանները որոնք կը տրուէին իշխանութեան կողմէ և կը հաստատէին զանոնք Գողգոթայի և Ս. Գերեզմանի մատրան իրենց իրաւունքներուն մէջ, ինչպէս նաեւ առանց միւս համայնքներու մասնակցութեան, Սրբավայրին միաստուած մասերը վերաշինելու և նորոգելու արտօնութիւնները, Տաճարին կանթեղներուն մեծամասնութիւնը, և սովորական գիշերային թափօրներով⁽¹⁶⁾ բոլոր խորաններուն այցելելու իրաւունքները կը հաստատէին յստակօրէն իրենց նախապատուութիւնը⁽³⁾:

ՀԱՅՐ Տ. ՊԱՆՏԻ Օ. F. M.

Հայացուցիմ

ԵՂԻԱ - ԳԵՂԱՄ

(Մնացեալը յաջորդ թիւով)

(16) Ըստ Հաննէ պատմագրի վկայութեան հինէն ի վեր մենք ևս ունեցած ենք նմանօրինակ թափօրներու իրաւունքը:

զբաղան ներմուծութիւններով: Այսպիսով ամէն մի կերպարանափոխութիւն ունի իր բուն պատճառը՝ ներքին, արտաքին կամ անհատական, որոնց միջոցով էլ լեզուի պատմութիւնը կապուած է նոյն ազգի քաղաքակրթութեան պատմութեան, քաղաքական պատմութեան և զբաղանութեան պատմութեան հետ:

Լեզուաբանութիւնը հաստատել է որ հայերէնը պատկանում է լեզուների այն մեծ ընտանիքին, որ յայտնի է գիտութեան մէջ Հնդեւրոպական լեզուախումբ անունով և որին պատկանում են Եւրոպայի արեւմտեան ծայրից (Իսլանդիա) մինչև Հնդկաստանի արեւելեան ծայրը տարածուած լեզուները: Այս բոլորը նախապէս կապուած էր մի լեզու, որ խօսուում էր «Հնդեւրոպացիներին» կողմից նախահայրենիքում՝ հնագոյն ժամանակ: Հետեւապէս տալ հայերէնի ամենահին վիճակի նկարագրութիւնը՝ նշանակում է նկարագրել հնդեւրոպական նախաշրջանի լեզուն և հնդեւրոպացոց քաղաքակրթութիւնը:

Համեմատական Բերականուրեան է պատկանում մանրամասնօրէն խօսել այն բոլոր հարցերի մասին, որոնք վերաբերում են Հնդեւրոպական լեզուախմբի ժամանակագրութեան, նախահայրենիքին, զաղթականական շարժումներին, այլ և այդ լեզուախմբին պատկանող մայր լեզուների եւ նրանց ժառանգների վիճակագրութեան մասին: Այստեղ աւելորդ էինք համարում սակայն այդ բոլորի վերաբերմամբ տալ մի համառօտ տեղեկութիւն, որից յետոյ անմիջապէս անցնում ենք նախաշրջանի լեզուի ու քաղաքակրթութեան նկարագրութեան:

Հնդեւրոպացոց նախահայրենիքի տեղը դեռ ևս ճիշտ չէ որոշուած. նա գտնուում էր Եւրոպայի արեւելեան մասերից սկսած մինչև Թուրքեստան գտնուած տարածութեան մէջ մի որոշ տեղ (հաւանաբար Բալթիկ ծովի արեւելեան կողմերը՝ արդի Լիթուանիայի սահմաններում կամ հարաւային Ռուսաստանում): Մի ժամանակ այդ ազգը նախահայրենիքում բնակելուց յետոյ, տալիս է իրանից զանազան զաղթականութիւններ, որոնք փուլում են գրեթէ ամբողջ Եւրոպայի և Ասիոյ մի մասի վրայ: Այդ զաղթականութիւններից յայտնի են

մեզ այժմ 11-ը, Սրանք են (արեւելքից արեւմուտք ընթանալով)՝

- 1.— Արիական ճիւղ (հնդիկներ և իրան-
[եաններ,
- 2.— Թոխարական ճիւղ,
- 3.— Հայկական ճիւղ,
- 4.— Կամիսական ճիւղ,
- 5.— Փոխգական ճիւղ,
- 6.— Յունական ճիւղ,
- 7.— Լիւրիկեան ճիւղ,
- 8.— Իտալական ճիւղ,
- 9.— Բալթիկ-սլաւական ճիւղ,
- 10.— Գերմանական ճիւղ,
- 11.— Կելտական ճիւղ,

Հնդեւրոպացոց գաղթականութեան ըս-
կիցքը պէտք է դնել Ն. Բ. երրորդ հա-
զարամեակի կէսին, այն է 2500 թուերին։
Ամենահին գաղթողներ Կամիսներն են, որ
անցել են Փոքր-Ասիա, նուաճել տեղացի
հաթեան ժողովուրդներին և նրանց հետ
միանալով կազմել մի մեծ պետութիւն։
Շատ աւելի ուշ գաղթում են միւս ճիւղե-
րը, Իւրաքանչիւրը հաստատուելով իր նոր
հայրենիքում, կազմում է նոր ազգեր և
նոր լեզուներ, որոնք մտնում են քաղա-
քակրթութեան ճամբի մէջ, յաճախ չըջա-
կայ ազգերից օրինակելով ստեղծում են
գիր ու գրականութիւն, ոմանք աւելի չուտ,
ոմանք աւելի ուշ։ Կամիսները առաջինն
եղան, որ Ասորեստանցիներից ստացան
գիրն ու գրականութիւնը։ Նրանցից յետոյ
գալիս են կարգով արիականը, յունականն
ու իտալականը, որոնք գրականութիւն են
սկսում քրիստոնէական թուականից առաջ,
միւսները այդ թուականից յետոյ և գլխա-
ւորապէս յունական կամ հռոմէական քա-
ղաքակրթութեան ազդեցութեան տակ եւ
յատկապէս քրիստոնէական առաքելու-
թեան նպատակով՝ Աւետարանի թարգմա-
նութեամբ։ Այսպէս են իռլանդերէնը,
գոթերէնը, սլաւերէնը և հայերէնը։

Հնդեւրոպական նախալեզուն վերա-
կանգնուած է լեզուաբանների ձեռքով՝ հա-
մեմատութեամբ հին և նոր, մեռել ու
կենդանի բոլոր հնդեւրոպական լեզուների
ու բարբառների, որոնք նոյն նախալեզուի
շարունակութիւնն են կազմում։ Պատրաստ

են հնդեւրոպական նախալեզուի Բառա-
րանն(*) ու Քերականութիւնը(**)։

Ինքնախաբէութիւն է սակայն կարծել
թէ ամենայն ինչ վերակազմուած է կա-
տարելապէս ու ամբողջապէս։ Լեզուաբա-
նական բոլոր քննութիւնները ձայնարանա-
կան, ձևաբանական ու շարադասական,
տալիս են մեզ նախալեզուի մասին միայն
մի ընդհանուր գաղափար, բայց նրա ամ-
բողջական պատկերը, ինչպէս նաև նրա
զարգացումը և ընդհանուր միութեան ժա-
մանակաշրջանից մինչև բաժանման բոլոր
եղած զարգացման պատկերը մեծազոյն
մասամբ մնում են անյայտ։ Մինչև ան-
գամ նախալեզուի բառամթերքը, որ լեզ-
ուի շատ աւելի հասարակ կողմն է, ամ-
բողջովին երեան հանուած չէ։ այսպէս
օրինակ՝ հնդեւրոպական նախալեզուից ան-
յայտ են մեզ ջըրթունք, կուրծք, թոք,
մազ, սև (գոյն), կոյս (աղջիկ)» և ուրիշ
բազմաթիւ հասարակ բառեր, որոնք չեն
կարող չգտնուել որևէ լեզուի մէջ։

Այժմ երկու խօսք էլ այն մեթոտի
մասին, որով լեզուից կամ լեզուների հա-
մեմատութիւնից հանուում է նոյն լեզուն
խօսող ազգի կուլտուրական պատկերը։

Երբ մի բառ նոյն կամ նման ձևով
գտնուում է բոլոր կամ գոնէ մի քանի ի-
րարից անկախ հնդեւրոպական լեզուների
մէջ, նշանակում է որ նա ուղիղ գծով
ժառանգութիւն է հնդեւրոպական նախա-
լեզուից, ուրիշ խօսքով այդ բառը գոյու-
թիւն ունէր նաև հնդեւրոպական նախա-
լեզուի մէջ։ Բառի գոյութիւնը անհրաժեշ-
տաբար ենթադրում է նաև գաղափարի կամ
առարկայի գոյութիւնը, որից էլ հետևում
է ժողովրդի կուլտուրական պատկերը։

ՊՐՈՖ. Հ. ԱՃԱՌԵԱՆ

(Շարունակելի)

(*) Լաւագոյն *Wurmsurwörterbuch* է Walde-Pokorny,
Vergleichendes Wörterbuch der Indogermanischen
Sprachen, Berlin 1927-31։

(**) Լաւագոյն *Wurmsurwörterbuch* է Brugmann, Grun-
driss der Vergleichenden Grammatik der Indogermanischen
Sprachen, Strassburg 1897։